**ОБЪЯВЛЕНИЕ**

**об изменениях, внесенных в заключенный договор**

Судебный департамент ниже представляет краткую информацию об изменениях, внесенных от 29-го апреля 2024 года в договор N «DD-GHAShDzB-24/04-1» (далее - Договор), заключенный от 8-го апреля 2024 года в результате процедуры закупки под кодом «DD-GHAShDzB-24/04», организованной с целью приобретения текущих ремонтных работ зданий, строений для своих нужд, и копию утвержденного в двухстороннем порядке документа, содержащего внесенные изменения.

Причина возникновения изменения:

Договор заключен на основе части 6 статьи 15 закона РА «О закупках», для выполнения предусмотренных Договором работ выделены финансовые средства.

Описание изменения:

- Приложение N 4 к Договору «ГРАФИК ОПЛАТЫ» утверждено в новой редакции.

-Сроком выполнения текущих ремонтных работ административного здания резиденции Аджапняк-1 уголовного суда общей юрисдикции первой инстанции города Ереван, расположенного по адресу г. Ереван, Назарбекян 40, установлено 14 календарных дней, со дня, следующего за днем вступления в силу соглашения.

-Сроком выполнения текущих ремонтных работ административного здания Апелляционного административного суда РА, расположенного по адресу г. Ереван Тбилисское шоссе 3/9, установлено 5 календарных дней, со дня, следующего за днем вступления в силу соглашения.

Обоснование изменения:

Пункты 8.5 и 8.13 договора

Заказчик – Судебный департамент

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**

**08.04.2024թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/04-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«29» «04» 2024թ.

ք. Երևան

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲԵՍԹ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Նաջարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 08.04.2024թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/04-1» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Աջափնյակ-1 նստավայրի՝ ք. Երևան, Նազարբեկյան 40 հասցեում և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ ք. Երևան, Թբիլիսյան խճ. 3/9 հասցեում տեղակայված վարչական շենքերի ընթացիկ նորոգման աշխատանքների անհրաժեշտությունը, ինչպես նաև Կապալառուի կողմից ներկայացված կատարվելիք աշխատանքների նախահաշիվները (այսուհետ՝ Նախահաշիվ) և Պայմանագրով սահմանված 80000000 (ութսուն միլիոն) ՀՀ դրամ առավելագույն գնից՝ համաձայն հաստատված Նախահաշիվների՝ համապատասխանաբար 2067430 (երկու միլիոն վաթսունյոթ հազար չորս հարյուր երեսուն) ՀՀ դրամի և 293360 (երկու հարյուր իննսուներեք հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը.

1.1 Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 4-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.2 Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Աջափնյակ-1 նստավայրի՝ ք. Երևան, Նազարբեկյան 40 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման ժամկետ սահմանել Համաձայնագրին ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 14 օրացուցային օր:

1.3 ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ ք. Երևան, Թբիլիսյան խճ. 3/9 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման ժամկետ սահմանել Համաձայնագրին ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 5 օրացուցային օր:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**Սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագրին ուժի մեջ մտնելը՝ 11.04.2024թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում**

Գ.Լևոն [signature]

**Կապալառուի կողմից կատարված աշխատանքների դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:**

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**

***Դատական դեպարտամենտ***

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ 900011192151

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

**Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան**

---------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

**«ԲԵՍԹ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ**

Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Լանջաղբյուր, Դպրոցականների 4

ՀՎՀՀ՝ 00494183

Հ/Հ՝ 220083335582000

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Գեղարքունիք» մ/ճ

**Տնօրեն՝ Ն. Նաջարյան**

---------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 1
« *29* » « *04* » 2024թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 4
« 08 » « 04 » 2024թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/04-1» ծածկագրով պայմանագրի)

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | ընդամենը |
| 1 | 45461100/509 | շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Երևան քաղաքում տեղակայված Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի և դրա առանձնացված ստորաբաժանումների վարչական շենքերի ընթացիկ նորոգման աշխատանքներ/ | | | | 2360790 | 2360790 | 2360790 | 2360790 | 2360790 | 2360790 | 2360790 | 2360790 | 2360790 | 2360790 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

**Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան**

(ստորագրություն) Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
**«ԲԵՍԹ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ**
Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
գ. Լանջաղբյուր, Դպրոցականների 4
ՀՎՀՀ՝ 00494183
Հ/Հ՝ 220083335582000
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Գեղարքունիք» մ/ճ

**Տնօրեն՝ Ն. Նաջարյան**

(ստորագրություն) Կ.Տ